ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023 թվականի N 1563 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 692-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի «դ.1» ենթակետը և համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության առաջնությունների, Հայաստանի Հանրապետության տարածքում կազմակերպվող և անցկացվող միջազգային մրցաշարերի մասնակիցների գիշերավարձի ու սննդի ընդունման չափը, Հայաստանի Հանրապետության առաջնությունների մրցանակակիրների և նրանց մարզիչների դրամական պարգևատրման չափը հաստատելու, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի անդամի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ուսումնամարզական հավաքի օրական կեցության վճարի չափը, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի անդամի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և

տարածքից դուրս ճանապարհորդելիս սննդի ընդունման չափը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հավաքական թիմի անդամի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ուսումնամարզական հավաքի և (կամ) միջազգային միջոցառմանը մասնակցության հետ կապված ծախսերը հաշվարկելու մասին» N 692-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման վերնագրում «գիշերավարձի ու սննդի ընդունման չափը» բառերը փոխարինել «գիշերավարձի ու սննդի օրական վճարի չափը» բառերով, իսկ «ճանապարհորդելիս սննդի ընդունման չափը» բառերը՝ «ճանապարհորդելիս սննդի վճարի չափը» բառերով.

2) որոշման նախաբանը «Հայաստանի» բառից առաջ լրացնել «Հիմք ընդունելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի «դ.1» ենթակետը՝» բառերով.

3) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «ընդունման» բառը փոխարինել «օրական վճարի» բառերով.

4) որոշման 2-րդ կետում «մինչև 9800 դրամ» բառերը փոխարինել «մինչև 16300 դրամ, որի մեջ ներառվում է սնունդ՝ համաձայն ֆեդերացիայի կողմից ներկայացված սննդակարգի և կալորիականության:» բառերով.

5) որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում «2000» թիվը փոխարինել «3300» թվով, իսկ «ընդունման» բառը՝ «վճարի» բառով.

6) որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում «10» թիվը փոխարինել «16,7» թվով, իսկ «ընդունման» բառը՝ «վճարի» բառով.

7) որոշման 4-րդ կետում «ընդունումը» բառը փոխարինել «վճարի չափը» բառերով.

8) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից: Սույն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետով նոր խմբագրությամբ շարադրվող N 1 հավել-վածի 3-րդ կետի գործողությունը տարածվում է 2023 թվականի մարտի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ